Հարցեր և պատասխաններ

Մենինգիտի մասին

«Բակտերիալ»

Հ. Ի՞նչ է մենինգիտը:

Պ. Մենինգիտը՝ ուղեղը և ողնուղեղը պարուրող թաղանթի վարակ է: Մենինգիտի հարուցիչներն են սովորաբար **վիրուսները** կամ **բակտերիաները**: Կարևոր է իմանալ, թե որ տեսակի մենինգիտ ունի հիվանդը, քանի որ այս վարակների լրջությունը և բուժումը տարբերվում են:

Հ. Ի՞նչ է բակտերիալ մենինգիտը:

Պ. Ցանկացած ոք կարող է բակտերիալ մենինգիտ ունենալ: Շատ մարդիկ կարող են բակտերիա պարունակել իրենց քթի և կոկորդի մեջ, սակայն հիվանդ **չլինել,** բայց փոխանցել այդ հիվանդությունը ուրիշներին: Բակտերիան սովորաբար տարածվում է փռշտալու և հազալու կամ անմիջական շփման միջոցով:

Բակտերիալ մենինգիտը ավելի տարածված է այն մարդկանց մոտ, ովքեր ապրում են խիտ բնակեցված զանգվածներում, ինչպես նաև նորածինների, երեխաների և պատանիների մոտ: Բակտերիալ մենինգիտը ավելի լուրջ հիվանդություն է, քան վիրուսային մենինգիտը: Բակտերիալ մենինգիտը կարող է ուղեղի վնասվածքի, լսողության կորստի պատճառ դառնալ, ինչպես նաև դժվարացնել ապագա ուսուցանումը և երբեմն մահացու ավարտ ունենալ:

Հ. Որո՞նք են բակտերիալ մենինգիտի նշանները և ախտանիշները:

Պ. Մենինգիտի նշանները և ախտանիշները տարբերվում են մարդկանց մոտ: Հաճախակի վիրուսային և բակտերիալ մենինգիտի նշանները և ախտանիշները նույն են: Սակայն, ՈՉ բոլորն են դրսևորում բոլոր ախտանիշները: Ախտանիշները ու նշանները հետևյալն են՝

- Տենդը
- Ուժեղ գլխացավը
- Վզի կարկամումը
- Փսխումը կամ սռտխառնոցը
- Շփոթվածությունը և քնկոտությունը
- Նորածինների մոտ նկատվող ախտանիշներից են՝ վատ տրամադրությունը, անքնությունը և վատ ախորժակը
- Մաշքի ցանը, որն ունի փոքր, կարմրավում կետերի տեսք
- Գիտակցության կորուստը

Հ. Ո՞րն է բակտերիալ մենինգիտի բուժումը:

Պ. Եթե բակտերիալ մենինգիտը շուտափույթ ՉԲՈՒԺՎԻ, հիվանդը կարող է մահանալ: Շատ կարևոր է բակտերիալ մենինգիտի անհապաղ բուժումը: Ներկայումս բակտերիալ մենինգիտը բուժվում է «անտիբիոտիկ» կոչվող դեղամիջոցների օգնությամբ:

Շարունակվում է հետևի մասում

Հ. Ինչպե՞ս կանխարգելեմ բակտերիալ մենինգիտը:

Պ. Բակտերիալ մենինգիտի միայն որոշ տեսակներն են փոխանցվում անձից անձ, և դրանցով, գրիպի մնան, հեշտ չէ վարակվել: Բակտերիալ մենինգիտի այս տեսակների համար՝ հիվանդի հետ բնակվող կամ նրա բերանի կամ քթի խոռոչի հեղուկների հետ անմիջական շփում ունեցող անձանց հաճախ խորհուրդ է տրվում «անտիբիոտիկներ» ընդունել: *Այս դեպքում, շատ կարևոր է, որ այս դեղորայքը ընդունվի հիվանդի հետ շփվելուց հետո հնարավորին չափ շուտ (մի քանի օրում):* Գոյություն ունեն պատվաստումներ՝ բակտերիալ մենինգիտի որոշ հարուցիչները կանխարգելելու համար: Եթե հիվանդի հետ շփման մեջ եք գտնվել կամ, հնարավոր է, դա ապագայում տեղի ունենա, Ձեր բժիշկը կարող է Ձեզ խորհուրդ տալ պատվաստվել՝ այս հիվանդությունը կանխարգելելու նպատակով:

Բակտերիալ մենինգիտը կանխարգելելու համար՝

- Խուսափեք միևնույն սպասքից, ծխախոտից, շրթներկից, սննդից, ջրի շշերից և թուք պարունակող այլ բաներից օգտվելուց:
- Հազալիս կամ փռշտալիս՝ ծածկեք Ձեր քիթը և բերանը:
- Եթե բժիշկը խորհուրդ է տվել, պատվաստվեք բակտերիալ մենինգիտի դեմ:
- Այցելեք Ձեր բժշկին, եթե մենինգիտի նշաններ ու ախտանիշներ ունեք:

Ձեր տեղային հասարակական առողջապահական կենտրոնն է՝

COUNTY OF LOS ANGELES
CALIFORNIA

COUNTY OF LOS ANGELES
Public Health